


պայմանաւ: Ակն արկցէ ընթերցողն յանուանս քառասունեւհինգ պարոնայցն հանդիսացելոց ՚ի թագակապութեան Լեւոնի, եւ սփռելոց գրեաթէ յերեսս բովանդակ երկրին Սիսուանայ, եւ տեսանէ՝ զի գրեաթէ մեծ կէտն ցոտարագգիք են, Յոյնք կամ Յունահայք (որպէս Կիո Սահակ, Միխայլ, Նիկիփոք, Ռոմանոս, Խոսոֆոք, եւ այլն), կամ Փռանկք եւ Ալամանք, (որպէս Տանկրի, Ճօֆրի, Ռոպերտ, Պալտին, Հեռի եւ այլն). յորս յաւելան յետ սակաւ ամաց, ՚ի մեռանել Պեմունդի Գ, ոմանք յաւագաց նորին եւ ՚ի պաշտօնէից. այսինքն ջամբոլայ Բրնձին՝ *Ուլիվէր* (Olivier), պօղլէրն՝ (տաճարապետ) *Բայէն, Թոմաս Մալրպրեօն, Ռոճեր տէ Մոնտ* կամ *Մոլտ* (Rogerius de Monte), *Կիլլոմ Տրլի, Ջուարտ?*, թերեւս Արշիվալտ որդի սենեսկալին Անտիոքայ, եւ *Գուլիէլմ* (de Turre): Նա եւ ՚ի պաշտօնեայս դրան իւրոյ էին ոմանք յօտարագգեաց անտի. զՅունաց յայտնապէս գրէր առ նա Ներսէս Լամբրունեցի. «Այս Հելլենացոց ազգս՝ ոչ թէ առ մեզ միայն ունին մուտ եւ ել՝ ՚ի սուրբ եկեղեցի, այլ եւ ՚ի ձեր արքունական ապարանսն՝ ունին ՚ի ձէնջ իշխանութիւն եւ պատիւ»:



Որքան ինչ ծառայութիւն կամ պարտականութիւն էր սոցա առ Լեւոն, ոչ գիտեմ. այլ միայն զի լճութեան օրինօք կապեալ էին ընդ նմա, ըստ սովորութեան անուանեալ Ասսիզացն Երուսաղեմի եւ Անտիոքայ: Էին եւ գերագոյնք ոմանք ՚ի նոսին, եւ ընդարձակութեամբ կալուածոց իւրեանց եւ ազատութեամբք. բաժտունս ունելով յերկրի իւրեանց, յանցս լերանց եւ գետոց, անկախ յարքունի իրաւանց, որպէս ինքնին ծանուցանէ Լեւոն ՚ի պարգեւագրին առ Գենուացիս, յամի 1215. որոց գլխաւոր՝ եւ առաջին ամենայն Պարոնայց պետութեանն՝ էր **Միր Ատանն, Ատոմ** եւս կոչեցեալ, վերատեսուչ ծովեզերեայց⁴⁷, եւ տէր այնքան ընդարձակ երկրի

⁴⁷ Ըստ վկայութեան Ապուլֆարաճի Ասորոյ ժամանակագրի: